և կոչեաց Մաժակ՝ այն է՝ Մաժակ Կեսարիա։ Եւ եթող ընդ նմա անձինս ԺՈՐ. և հրամայեաց բնակչացն լեզու Հայկական ուսանիլ. որ կոչի մինչև ցայսօր երկիրն այն Յունաց լեզուաւն Բրբրոդոն Երմենիեան, այսինքն՝ Առաջին Հայք, և անտի մինչև յիւր աշխարհն ելից մարդկամբ։ Եւ յետոյ Մաժակն՝ վասն տիրապետելոյ Կայսերացն Հռոմայ՝ կոչեցաւ Կեսարիա։ Այսու ժամանակաւ հայրն հաւատոյ՝ Աբրահամ՝ ծանօթացաւ Աստուծոյ։

Երայ գեղեցիկ՝ որդի Երամայ. սա պատուեցաւ 'ի Նինոսէ որպէս և հայրն իւր Երամ։ Իսկ յետ մահուան Նինոսի՝ կին նորա վավաշն Շամիրամ՝ կոչեաց զԵրայն գեղեցիկ՝ երթալ և առնուլ զնա 'ի կնութիւն։ Եւ իբրև ոչ կամեցաւ Երայ, յետոյ այլ դեսպան՝ ընծայիւք առաքեր՝ թէ՝ ելակ առ իս և կատարեա զկամն և զարձիր յերկիր քո. և Երային վասն ոչ հաւանե-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան